Կորյուն Աթոյանի խոսքը «Համալսարան-Գործատու Հայկական համակարգող գործակալություն» Տեմպուսի ծրագրի մեկնարկային հանդիպմանը

Հարգելի գործընկերներ,

Ողջունում եմ ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում «Համալսարան-Գործատու Հայկական համակարգող գործակալություն» «Տեմպուս»-ի ծրագրի մեկնարկային հանդիպմանը:

Ծրագիրը, որ մենք միասին կիրականացնենք, խիստ համահունչ է Եվրոպայում ընթացող կրթական բարեփոխումներին և զարգացումներին: Բոլոնիայի գործընթացի սկզբից անցել է արդեն տասներեք տարի, սակայն կրթական բարեփոխումները դեռ չեն մտել ավարտական փուլ: Ներկա զարգացումներն արդեն պայմանավորված են կրթության քաղաքականությունից անցումով դեպի դրանց իրագործումը: Եվ այս պատասխանատվությունը կրում են համալսարանները: Համալսարանների գործունեությունից է կախված կրթական բարեփոխումների իրականացումը և, ընդհանուր առմամբ, հասարակական զարգացումն ամբողջ Եվրոպայում: Ինչպես նշված է Համալսարանների ազատությունների խարտիայում «... մարդկության ապագան մեծապես կախված է մշակութային, գիտական և տեխնիկական զարգացումից, որը ստեղծվում է մշակույթի, գիտելիքի և հետազոտությունների իրական կենտրոններում՝ համալսարաններում»:

Համալսարանները վերակառուցվում են՝ ըստ նոր մարտահրավերների: Դառնում են ազատ ու ստեղծագործ մտքի բաց հարթակներ՝ հասարակությանը մատուցելով կրթական, գիտական և այլ ծառայություններ:

Գիտելիքի էական զարգացման համար անհրաժեշտ է համալսարանների, մասնավորապես եվրոպական, տեղեկատվության և փաստաթղթերի փոխանակում, ինչպես նաև համատեղ ծրագրերի իրականացում կրթության առաջադիմության համար: Այսպիսով, ինչպես համալսարանների ստեղծման ժամանակներում, այնպես էլ այժմ համալսարանները պետք է խրախուսեն դասախոսների և ուսանողների շարժունությունը և դրա հետ մեկտեղ ընդունեն օտարերկրյա դասախոսների և ուսանողների հավասար կարգավիճակը, գիտական աստիճանները, գիտելիքի գնահատման արդյունքները և իրականացնեն համալսարանի կարևորագույն առաքելությունը՝ ուսուցանեն:

Համալսարանները աստիճանաբար պետք է հաղթահարեն մեկուսացված՝ «փղոսկրյա աշտարակի» կարգավիճակը և դառնան ոչ միայն բաց համակարգեր, այլև կամրջեն կրթությունն ու աշխատաշուկան: Այս գործընթացներում պետք է ընդգրկվեն կրթության բոլոր շահակիցները՝ ուսանողները, գործատուները, շրջանավարտները, ծնողները, պետական և հասարակական կազմակերպությունները, այլ խոսքով՝ ամբողջ հասարակությունը: Նշվածը խիստ տրամաբանական է, քանզի կրթությունը հանրային բարիք է: Ժամանակակից աշխարհում համալսարանների առաքելությունը ոչ միայն կրթություն տրամադրելն է, այլև հասարակական ակտիվ քաղաքացու, ազատ, ստեղծագործ մարդուն անհրաժեշտ գիտելիքի, հմտությունների և պատասխանատվություն փոխանցումն ու զարգացումն է:

Ահա այս մարտահրավերներին է ուղղված «Արարատ» ծրագիրը, որը մենք համատեղ կիրականացնենք գալիք երեք տարիների ընթացքում:

Ծրագրի գերնպատակն է կրթության բոլոր շահակիցների հետ աշխատելով՝ ապահովել կրթության և աշխատաշուկայի կապը, աշխատաշուկայի պահանջներից ելնելով՝ իրականացնել կրթական գործընթացի բարեփոխումներ:

Այդ նպատակի իրականացման համար.

- կստեղծվի կառավարման խորհուրդ և քարտուղարություն,
- կհզորացվեն գործընկերների կարողությունները ինչպես սարքավորումներով, այնպես էլ վերապատրաստման դասընթացներով ու ուսումնական նյութերով՝ ապահովելու և արդյունավետ իրագործելու կրթության և աշխատաշուկայի կապի զարգացումը,
- գործատուների հետ կքննարկվեն և կմշակվեն ոլորտային և համապատասխան որակավորումների բնութագրերը, դրանց շրջանակը և աշխատաշուկա-շրջանավարտ կապն ուժեղացնող տվյալների բազա ու այլ գործիքակազմ,
- կվերապատրաստվեն նշված գործողություններն իրականացնողները:

Այսպիսով, ծրագրի իրականացումը կխթանի նաև կրթական հետազոտությունների իրականացումը, կրթության պլանավորումը և գնահատումը: Ծրագիրն ամբողջությամբ կծառայի կրթության գերնպատակի՝ կրթության որակի բարձրացմանը:

«Տեմպուս»-ի ծրագրերի իրականացման շրջանակում առաջին անգամ հայաստանյան համալսարանը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը կհամակարգի ծրագիրը, պատասխանատու կլինի դրա արդյունավետ իրագործման համար:

Հարգելի գործընկերներ, հավաստիացնում եմ, որ ծրագրի նպատակների իրագործման համար մեր համալսարանը կգործադրի բոլոր անհրաժեշտ միջոցները, կարողություններն ու ներուժը:

Ամփոփելով՝ կցանկանայի հաջողություն մաղթել մեզ ինչպես կրթական բարեփոխումների, այնպես էլ ծրագրի արդյունավետ իրականացման գործում:

Շնորհակալություն:

Հարգանքով՝ ՀՊՏՀ ռեկտոր

Կորյուն Աթոյան

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ